

Մուրադյան Թ. - Քանակ՞, թե՞ որակ. Արվեստի բուհերը տաղանդավոր երիտասարդների դպրանոցն են - թերթ, «Հայաստանի Հանրապետություն», Ե., 14.10.2010

(Հատված հոդվածից)

Վերջերս շատ է խոսվում այն մասին, որ բարձրագույն կրթության համակարգում առաջարկը գերազանցում է պահանջարկին: Այսինքն, բուհերի շրջանավարտների թիվը շատ ավելի մեծ է, քան պահանջվում է մեր երկրի տնտեսությունում եւ այլ ոլորտներում: Արդյունքում բազմաթիվ երիտասարդներ բախվում են գործազրկության խնդրին, իսկ որ ավելի ցավալի է, ոմանք հանիրավի ավելի արժանավորի, տաղանդավորի տեղն են զբաղեցնում:

Այս խնդիրն առկա է նաեւ արվեստի մասնագիտացմամբ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ասել, թե այս ուղղվածությամբ բուհերում պատրաստվող կադրերի ավելցուկ կա հանրապետությունում, խիստ կինչի: Բայց որ պրոֆեսիոնալ արվեստագետների, արվեստաբանների, մշակութաբանների, թատերագետների, դերասանների, երաժիշտների կարիք կա ու դեռ երկար ժամանակ կլինի, կասկածից վեր է: Ինչպես մյուս բուհերում, այստեղ էլ շատերի համար գլխավորը համապատասխան մասնագիտացմամբ դիպլոմ ստանալն է, իսկ հետո... մի բան կլինի, էլի:

Դա, ըստ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանի, սխալ մոտեցում է: «Մենք պետք է հետեւենք եվրոպական երկրների օրինակին: Այնտեղ ընդունվածների գրեթե 40 տոկոսը չի ավարտում: Մինչդեռ մեզ մոտ կրթությունը վերածել են խողովակի՝ մի ծայրից մտնում են, մյուսից դուրս գալիս: Ձեւական մասսան չպետք է ավարտի: Այդպիսիները թող «սովորեն» ու ինչ—որ թուղթ ստանան, ինչն էլ կվկայի, որ այդ ոլորտից ինչ—որ չափով տեղյակ են»,—«ՀՀ»—ի հետ զրույցում ասաց պարոն Իսաբեկյանը՝ հավելելով, որ իրենց մոտ խնդրին փորձել են որոշակի լուծում տալ: Ըստ նրա, ավելի նպատակահարմար կլինի «պատահական» ուսանողների մուտքը դեպի բուհ արգելել հենց ընդունելության քննության օրը: Իսկ եթե, այնուհանդերձ, դարձրել են ուսանող, ապա անհապաղ պետք է ֆակուլտետի «մաքրման» աշխատանքներ տանեն եւ չթողնեն, որ այդպիսիները հասնեն վերջին կուրս, հետո էլ պայքարեն մասնագիտական աշխատանքի համար՝ զբաղեցնելով ինչ—որ մեկի տեղն ու բիծ թողնեն արվեստի վրա:

Իսկ «մաքրման» աշխատանքների հետեւանքով չէ՞ որ կտուժի բուհի բյուջեն՝ մեր դիտարկմանն ի պատասխան, Ա. Իսաբեկյանը հավաստիացրեց, որ իրենց համար քանակից առավել կարելու է որակը:

Մեր օրերի մոդան

Եթե ամենամոդայիկ ֆակուլտետների ինչ—որ ցուցակ գոյություն ունենար, ապա դրանում տնտեսագիտության, իրավաբանության, միջազգային հարաբերությունների կողքին տեղ կզբաղեցնեին նաեւ դասական երաժշտությունը, մոդելավորումը եւ

համակարգչային գրաֆիկան: Սակայն, ի տարբերություն առաջինների, վերջինների բնագավառում աշխատանք գտնելը, վերոնշյալ բուհերի ներկայացուցիչների հավաստմամբ, ավելի դյուրին է: «Դիզայնի եւ համակարգչային գրաֆիկայի ամբիոնների շրջանավարտները գրեթե բոլորն էլ, ցանկության դեպքում, աշխատանք ունենում են եւ բավականին լավ վարձատրվում են»,–ասաց Ա. Իսաբեկյանը: Միայն թե նա չի կարողանում հասկանալ, թե ավարտելուց հետո ինչո՞վ են զբաղվում մոդելավորման ամբիոնի ներկայացուցիչները, որոնց 99 տոկոսն աղջիկներ են: Չէ՞ որ մեր երկիրը Ֆրանսիան չէ, որ հագուստի ֆաբրիկաներ, դրան զուգահեռ էլ մեծ թվով աշխատատեղեր ունենա: Հետեւաբար, այդ ոլորտի մասնագետները կամ փոխում են մասնագիտությունը, կամ էլ պարզապես բավարարվում են կրթված մայր լինելու հանգամանքով:

Թամարա ՄՈՒՐԱՂՅԱՆ

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20101014_12&flag=am